**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Օ Ր Ե Ն Ք Ը**

Ընդունված է 2016 թվականի հոկտեմբերի 4-ին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ**

**Մ Ա Ս 2**

**ՀԱՏՈՒԿ ՄԱՍ**

**Բ Ա Ժ Ի Ն 6**

**ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԸ**

**Գ Լ ՈՒ Խ 23**

**ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Հոդված 126. Շահութահարկի վճարումից ազատումը**

1. Մինչև ~~2024~~ 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ընդգրկված հարկային տարիների համար շահութահարկի վճարումից ազատվում են գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղված շահութահարկ վճարողները՝ իրենց կողմից գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացվող եկամտի, ինչպես նաև այլ ակտիվների իրացումից ստացվող և այլ եկամուտների մասով, եթե այլ ակտիվների իրացումից ստացվող և այլ եկամուտների տեսակարար կշիռը համապատասխան հարկային տարվա համախառն եկամտի մեջ չի գերազանցում տասը տոկոսը: Այլ ակտիվների իրացումից ստացվող և այլ եկամուտների տեսակարար կշիռը համապատասխան հարկային տարվա համախառն եկամտի մեջ տասը տոկոսը գերազանցելու դեպքում սույն մասով նախատեսված արտոնությունը գործում է միայն գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացվող եկամտի մասով: Սույն մասի կիրառության իմաստով՝

1) գյուղատնտեսական արտադրանք են համարվում հարկ վճարողի կողմից իրականացված գործողությունների արդյունքում կենդանիների կամ բույսերի կենսաբանական վերափոխման միջոցով վերջնական կամ միջանկյալ սպառման համար ստացվող, մասնավորապես՝

ա. հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերը,

բ. տեխնիկական մշակաբույսերը,

գ. պալարապտղային, բանջարային, բոստանային մշակաբույսերը և փակ գրունտի արտադրանքը,

դ. դաշտային մշակման կերային մշակաբույսերը,

ե. կերարտադրության այլ արտադրանքը,

զ. պարտեզների, խաղողի այգիների, պտղատու այգիների, հատապտղանոցների և ծաղկաբուծության արտադրանքը,

է. ծառերի և թփերի սերմերը, պտուղներում եղած սերմերը,

ը. ծառերի և թփերի սածիլները,

թ. ծառերի և թփերի տնկիները,

ժ. տավարաբուծության արտադրանքը,

ժա. խոզաբուծության արտադրանքը,

ժբ. ոչխարաբուծության և այծաբուծության արտադրանքը,

ժգ. թռչնաբուծության արտադրանքը,

ժդ. ձիաբուծության, գոմեշաբուծության, էշաբուծության և ջորիաբուծության արտադրանքը,

ժե. եղջերվաբուծության, ջայլամաբուծության և ուղտաբուծության արտադրանքը,

ժզ. ճագարաբուծության, մորթատու գազանաբուծության և որսորդական տնտեսության արտադրանքը,

ժէ. ձկնաբուծության, մեղվաբուծության, շերամաբուծության, արհեստական սերմնավորման արտադրանքը.

2) մինչև ~~2024~~ 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ընդգրկված հարկային տարիների համար գյուղատնտեսական արտադրանքի գծով ստացվող եկամտի ճշգրիտ հաշվարկման անհնարինության դեպքում այն հաշվարկվում է՝ հիմնվելով Օրենսգրքի բաղկացուցիչ մասը կազմող հավելված 2-ով սահմանված՝ կադաստրային գնահատման կարգով հաշվարկված հաշվարկային զուտ եկամտի տվյալների վրա